Գործ թիվ ԵԴ/46450/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

‹‹26›› սեպտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով <<Տեխպրոֆշին>> ՍՊԸ-ի հայցադիմումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորի <<Տեխպրոֆշին>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ հետևյալ պահանջների մասին.

<<1. Անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից <<18 տարեկանից բարձր տարիքի անձնաց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում>> միջոցառման շրջանակում համայնքային փոքր տան ձեռքբերման նպատակով <<ԱՍՀՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2022թ. նիստի թիվ 4 և 14.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումները:

2. Պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից <<18 տարեկանից բարձր տարիքի անձնաց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում>> միջոցառման շրջանակում համայնքային փոքր տան ձեռքբերման նպատակով 22.04.2022թ. հայտարարված <<ԱՍՀՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին <<Տեխպրոֆշին>> ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագրի նախագիծ և պայմանագիր կնքելու առաջարկ՝ վերջինիս կողմից առաջադրված գնային առաջարկում առկա գներով:>>:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը Դատարանում մուտքագրվել են 20.09.2022թ. և 22.09.2022թ. հանձնվել դատական կազմին:

Հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ առկա է սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտություն, ուստի գտնում է, որ գործը պետք է քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծանուցման կարգի վերաբերյալ նախատեսված առանձնահատկությունները և հաշվի առնելով գնումների հետ կապված վեճերը քննելու սեղմ դատավարական ժամկետները՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծանուցումներն անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ դատական ծանուցագրերն ու դատավարական փաստաթղթերն ուղարկելով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստերին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով, 125-րդ հոդվածի 1-ին մասով, 297-րդ հոդվածի 4-րդ մասով և 199-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

<<Տեխպրոֆշին>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ վերը նշված պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ և հրավիրել նախնական դատական նիստ 10.10.2022թ. ժամը 16:00-ին:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**